



ՀԱՍՏԵ
 To the DICKRIS PUBLISHING CO
 301 East 34th St., New York City
 Entered at the Post Office at New York as
 Second-Class Mail Matter.
 Խմբագրութեան գրկուած ծրար
 կամ նամակ ետ չեն ղրկուիր :

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ
 ՏԼ. ՍԹ.
 1 50
 Վեցամսայ 75
 Եռամսայ 40
 ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
 Տարեկան 10 ֆրանք.
 Բաժանորդագրինն կԱՆՆԻԿ վճարելի

ՄԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 80 ՆԻՒ ԵՈՐՔ, ՀԱՄԱՐ, ՄԱՅԻՍ 20 1899 ԳԻՆ 3 ՍԷՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կորուսած չեն. — Ազգային քրո-
 նիկ (Հայաստանի կացութիւնը, Հայ-
 կական խնդիր ևն.) — Նամակ Նիւ
 Պրիթլենդէն. — Նամակ Լօվէլէն. —
 Նամակ Նիւ Հէյլենդէն. — Ներքին
 լուրեր. — Քաղաքական. — Բա-
 նասիրական (Ռուսիա և Հայերը):

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԻՍԻ յաջորդ թիւը կը հրա-
 տարակուրտ արտակարգ ծաւալով ու
 պարունակութեամբ եւ պատկերա-
 զարդ. Երկարութեան պիտի հաս-
 ուի 5,000 օրինակ, պիտի ծախուի
 հասար 10 սէնթի ի ՆՊԱՍՏ ՎԱՆԻ
 ՍՈՎԱՍՏԱՆՁՆԵՐԻՆ:

Կը վաճառուի մեր գործակալնե-
 րու մօտ՝ հոգաբարձութիւններու
 հսկողութեան տակ. Այն հոգաբար-
 ձական մարմինները կամ մասնաւոր
 անհատները, որոնք կուզեն թերթի
 վաճառումը ուղղակի ստանձնել, թող
 հաճին անմիջապէս գրիմը մեզ՝ նշա-
 նակելով իրենց պահանջած թիւը :
 Հասոյթը մէջ մի տեղի հոգաբար-
 ձութեան ձեռքով պիտի ղրկուի Գեր.
 Յովսէփ Եպ. Սարգսեանին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ
 (Շարունակութիւն նախորդ թուէն)
 Ա.

ԳԻՒՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ասկէ ետքը, տեղեկագիրը ման-
 րամասնութիւններ կուտայ կողմասի
 անգլային վարչութեան թերթի թանց
 և պէտքերուն մասին, և այն մեծ
 դժուարութեանց վրայ, որոնց պէտք
 է յաղթել. նոյնպէս կը զգացնէ թէ
 հարկ է որ կողմասի ընդհ. կառավար-
 րիչը մասնակցի Բեռլինի մէջ
 տեղի ունեցած նախարարական վի-
 ճաբանութեանց՝ օրինական ծրագրի-
 ներուն վրայ: Տեղեկագիրը կ'ըսէ թէ
 դատարաններ ու դատաւորներ ինչ-
 պէս նաև կառավարական հսկողու-
 թիւն չկայ կողմասի գրեզներուն մէջ.
 Հոն ամեն բան գիւղապետներու և
 հաշտարարներու ձեռքն է, որոնք
 չափազանց զբաղեալ են: Պաթուհի,
 կարսի և Արդուի մէջ որ և է գիւղ-
 այսին վարչութիւն չկայ, և կարգ
 մը կ'ընտոտ խնդիրներ ու վէճեր, ո-
 րոնք առնչութիւն ունին տեղական
 սովորութեանց հետ, լուծման կըս-

ԿՈՐՈՒՄՈՒՄ ՉԵՆ

Ոստքը Ամերիկայի Հայ գաղութի
 մասին է:
 Երկու ծայրեր, երկու պատկեր-
 ներ. միին տխուր, միւսն յուսա-
 տու:

Գանգատներ ու բողոքներ շա-
 րունակ կը հասնին մեզ, պատկեր
 ապականութեան, բարբի անմաքու-
 թեան և անկամ: Տեղ մը Հայ կի-
 նը կը լքէ իւր ամուսին, իւր նորա-
 ծին գաւազը. ուրիշ տեղ մը Հայ օ-
 րիորդ, — այն համեստ Հայ աղջիկը
 որ Հայաստանի մէջ համեստութեան
 ու ամօթխածութեան կարմիր մ'ու-
 նէր շարունակ իւր այտերի վրայ—,
 խաբեարյութեան կատարեալ անպատ-
 կառ տիպար մը կը ներկայանայ. ազ-
 գին անուն ու պատիւ, ազգին սըր-
 բութիւն միջոց կընտրէ իրեն լաւը-
 շաբար օտարը խաբելու, իր գրպա-
 նը պարտելու: Հայ երիտասարդը
 մոռցած մտնի ու գութանի համեստ
 ու պարզ կեանքը Հոս բաղդախաղի
 կործանիչ սեղանին շուրջ հաւաքուած
 կամարայականայ, կըստորանայ ու
 կը կործանի: Ստոր մոլորութեան և գա-
 րեշուրի գեղեցիկ բաժանին շուրջ կը
 խամրին սրտի էն աղնիկ զգացումնե-
 րը, կը պաղին հայրենիքի սուրբ յի-
 շատականքը, բոյն կը դընէ շարիքը,
 անբարոյական մտածումներ հիւանդ
 ուղեղների մէջ կարմատանան, ան-
 կում, կորուստ և շրջապատի արդար
 զգուանք ու արհամարհանք, նոր վա-
 րակիչ արտ մը, որ դէպի գերեզման
 կը աննէ, պատուի ու կեանքի գե-
 րեզման, որ աշխարհի մահերի էն ըս-
 տոր ու էն զղուելին է:

ԿԱՍԵՆ: ԸՆԴՀ. ԿԱՌԱՎԱՐԻՉԸ ԱՐՈՑ-
 ՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՔԷ ԲՈՂՈՐ ԱՅՈՒ ԽՐԵՆ-
 ԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՃԵԼ ԻՐ ԹԻՖԼԻՉԻ ՈՐ-
 ՀՈՐԴԻՆ ՄԻՋՆԵՍԱ, ՈՐՈՎՀԵՆԱԸ ԲԵ-
 ԴԵՐԱՎՈՐԿԻ ԾԵՐԱԿՈՅԱԿԻՆ ՄԵՋ ԱՆՈՆԵ
 քննութիւնն ու որոշումը երկար կը
 տեւէ: Չարը այս կէտին վրայ մա-
 կաբարձ է: «ԱՍՈՐ ԴԵՄ ԸՍՆԼԻՔ
 ՉՈՒՆԻՄ»:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Կօլիցին իշխան կը խօսի նաև քա-
 ղաքային խորհուրդներուն վրայ, ո-
 րոնց մէջ Հայերը գերակշիռ դիրք
 ունին, 1892ի օրէնքը առաւելակը-
 ռութիւն տուած է սեփականատէրե-
 րուն: Ուստի կ'առաջարկէ որ կառա-
 վարութիւնը ինք ընտրէ քաղաքա-
 գրութիւնները, որոնք քաղաքային հա-
 սոյթներէն անոնց տրուելիք տարե-
 թոշակը և քաղաքային խորհուրդնե-
 րուն անդամները ընտրուին նոր կա-
 նոնաքրի մը համաձայն՝ կառավար-
 ութեան քննիչութիւն տակ: Կ'առա-
 ջարկէ նաև որ կառավարչները ի-
 րաւունք ունենան հրաժարեցնելու
 քաղաքային խորհուրդի այն անդամ-
 ները որոնք իրենց պարտքը պատ-
 չածօրէն չեն կատարեր (1): — Այս
 (1) Այսինքն չեն ուսանար:
 ԽՄԲ.

ՅՈՒՍԱՀԱՏԱԿԱՆ Է ԱՅՈՒ ԱՊԱՏԻԿԵՐ,

ԶԷՆ:
 Այ՛ն ծայրայեղ յուսահատական,
 կե՛ծէ աղնիկ գործեր, աղնիկ ձգտում-
 ներ չը գային մեզ համոզելու, որ
 մեր նոր գաղութը ամեն տեղէ աւե-
 լի վառ պահած է հայրենի յիշատե-
 կներ, հայրենիքի կարօտն ու աննշա-
 քեն կը տիրապետեն իւր զգացում-
 ների վրայ:

Երէկ սով կար Զէյթուն, այսօր
 ալ սով է, Զէյթուն կը կորուսէր, ըզ-
 գացինք, ճանչցանք մեր պարտակա-
 նութիւն, մեր սէրը դէպի կարիճ լե-
 ունցիկները և մօտեցանք օգնութեան
 գանձանակին, մեր լուսմանքը սըր-
 տով Հոն դրինք, թող ըլլար որ շատ
 քիչ էր, բայց քանակը չէ մեր փնա-
 ուածը, այլ զոհաբերութեան գաղա-
 փարն է որ միշտ կը գնահատուի:

Այսօր ալ վանի դժբաղդ սովը
 գրաւած է մեր մտածումները, կը
 յուզուինք անբաղդ վաստակների
 մահամերձ պատկերը առաջինս բե-
 րելով: Չենք զլացած եւ չը պիտի
 զլանանք օգնութեան ձեռք կարկա-
 ճելով փրկելու մեր ազգայինների
 կեանքը սովի ճիրաններէն: Տեղ տեղ
 կատարուած հանգանակութիւնները
 մեր աղնիկ ծիգերի ապացոյցներն են:

Այս միայն չի լրացնէր մեր յու-
 սատու պատկերը: Հայոց լսարաններ,
 ընթերցարաններ, թատրոններ, հա-
 ւաքումներ միսթարական երևոյթ-
 ներ են, թող ըլլայ որ շատ մը տե-
 ղեր խեղճ ու թերի գտնուին, բայց
 այն հաւաքումներ, որոնք ընդհան-
 րապէս հայրենի յիշատակների շուրջ
 կը դառնան՝ զգացումներ կ'արծար-
 անեն, միտքեր կը ծնեցնեն և մասաւոր
 սնունդ կը մատակարարեն, որոնք

կրնան վերանալ. դէպի աղնիկն ու
 բարին: Երկու օր առաջ կ'այցելէի
 Նիւ Եորքի երիտասարդաց Հայկական
 Կաճառը, ուրախ ու կազդուրիչ ար-
 պաւորութեան մը սակ՝ դուրս կել-
 լէի այդ յարգելի հաստատութենէն:
 Հայ աղնիկ երիտասարդներ խումբ
 մը իւր օրինակելի գործով միսթա-
 րական յոյսեր կ'արծարծէ մեր մէջ:
 Գործարանի մաշող կեանքէն երեկոյ
 վերադարձող երիտասարդները փո-
 խանակ ժամավաճառութեամբ կեան-
 քերին մաշելով, Հոս կը հաւաքուին
 զինուորական մարզանքով կազդուր-
 ուելու բարոյապէս և Ֆիլիքապէս:
 Եւ ի՛նչ օրինակելի կարգապահութիւն:
 Ասոնք միսթարական յոյսեր են
 և քաղաքութեան արժանի:

Երկու ծայրեր ներկայացուցնելէ
 վերջ, մենք գերակշռութիւն կու-
 տանք բարձրացման յոյսերուն: Ճըշ-
 մարտութիւնը յաղթող է: Ամեն
 անոնք, որոնք ապականութեան դէմ
 բողոքող են, թող իրենց ձայն միա-
 ցունեն մամուլին հետ, թող մտնեն
 ապականուած որջեր և բարձրացնեն
 ընկած մարդը աղանքի մէջէն:
 Միտքը շարունակ սնունդ կուզէ
 կամ չար կամ սուրբ, սրբեցնէ շա-
 րութեան սեփական այն ստեղծա-
 ճուր սրտեր պիտի գտնէք Հոն թաղ-
 ուած: Մարած սրտերի մէջ արթնե-
 ցուցէք աղնիկ մտածումներ, գրա-
 ւեցէք սիրտը դէպի բարին ու գա-
 ղափարականն, միակ միջոց այդ է
 շարիքն արմատախիլ ընելու, և այն
 ստեղծապահութեան ինքը իր ձեռ-
 քով կը կոտորէ բաղդախաղի սեղանը,
 կը լսէ իր ներքին ձայնին:

Պարտաճանաչութիւն եւ յոյս,
 այն ստեղծապահութեան հղիք որ կոր-
 սուած չեն:
 Վ. ՇԱՀԷՆԻ

Բ. ՏԵՂԵԿԱԿԱՐԻ ԳՈՐԾԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԳՐԻՍԻ սիւնակների մէջ հրա-
 տարակելով Կօլիցին իշխանի տեղե-
 կագիրը, որ տարի մը առաջ ինք ան-
 ձամբ Բեռլինի քաղաքի թերթով Չարին
 ներկայացուց, և որի լուսանցներուն
 վրայ բարեխառն մը Չարը «Ան-
 շուշու» ներով և «Այդ պէս պէտք
 է գործ եւ ընկերով զարգարեց. կար-
 ծեմ՝ հետաքրքիր կըլլար շեշտել այն
 կէտն ալ թէ ցայսօր ի՛նչ է եղած
 այդ որոշումների գործնականը: Մեր
 յարգելի ընթերցողներուն կ'առա-
 ջարկենք անգամ մ'ալ ձեռք առնել
 այս տեղեկագիրը, իսկ մենք նոյն
 տեղեկագրի բաժանումների համա-
 ձայն՝ կ'աշխատինք տալ այն իրական
 ու դժբաղդ վիճակը, ինչ որ կը ներ-
 կայացնեն այսօր Կողմասի գործերը:

Ռուսիա իւր ձուլման նպատակը
 իրականացնելու համար ընակն է որ
 էն աւելի ուշ պիտի դարձնէ կրօնա-
 կան խտրութեանց վրայ, որոնք ազ-
 գերի մէջ հեռադուրսեան մեծ ան-
 դունդներ են, և Ռուսիա այդ ան-
 դունդները կը լեցնէ: Վրացին առան-

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

The Christian -ի Ապրիլ 27, 1856րդ թվականի մէջ կը կարդանք՝ Տօքթոր Բէյնօլտս Ապրիլ 3 թվականի կիր նամակով մը վանէն գրելով՝ կ'ըսէ՝

«Թողէ՛ք համառօտակի տեղեկագրեմ կացութիւնը: Քաղաքի մէջ անսուղութիւնը հետու պահելու վրայ ենք, մեր աշխատանցի միջոցով ընկելով անամենը՝ ինչ որ հնար է ընել. ասով մէկտեղ ստիպուած ենք նաև ձրի հաց ալ տալ: Գիւղերու հագասութիւնը աւելի դժուար է: Մտաւորապէս 1,000 լիրա բաժնուած է անոնց: Հաւանորէն 25,000 հոգի կան, որ բոլորովին անբաւականացողից կերակուրենով կ'ապրին, — խոտի հունտեր, կտասա, արմատներ և ասոնց նման բաներ: Այս բազմութիւնը ապրուստի նման բանով մը կանոնաւորապէս ապրեցընելու համար մինչև հունիսը՝ իւրաքանչիւրին անուազն շափ մը ցորեն հարկաւոր է, և ասոր համար ալ 12,000 լիրայի պէտք մը կայ:

«Անշուշտ պարտաւորեալ չենք այդքան մեծ գումար մը մէկէն վըճարելու, սակայն և այնպէս պատրաստի ունեցած 1000 լիրանիս հազիւ թէ բաւէ իսկական մահէ մը զանոնք փրկելու: Անօթութենէ շատ մը մահեր պատահած են և ժողովրդի առողջութիւնը ընդհանուր առմամբ վատնուած է՝ մասնաւորապէս վերջին ծայր զգայնիկ ըլլալու ազդեցութենէն: Այս բանը ակներեւ կը տեսնուի բազմաթիւ մեռնողներու աւելի ընտանիքներ, որ որբանոց տանուած որբերու մէջ տեղի կ'ունենայ:

«Հակառակ իրենց քաջած բոլոր առաւարներէն, այս խեղճ գիւղացիները կարգչն մեզ, որ կըրօցածնուս շափ իրենց սերմնացու տանք և կը յարեն թէ իրենք պատրաստ են ամեն կերպով ծայրայեղ համբերութեամբ մը մահուան դիմագրաւել, հերիք է որ սերմնացու մը ապահովուին: Հիմա մենք մեր այժմ տուած ենք սերմի բաշխումին: 2000 թիւրքական լիրայէն պակաս չենք կարող

մին ազգ մըն էր, առանձին եկեղեցի մը ունէր, կորսնցուց և այսօր խոտի մերժուեցաւ իրեն գէթ քանի մը աղօթքներ վրացերէն լեզուով կարգաւոր եկեղեցւոյ մէջ: Վրացին այդ անդունդի հեռաւորութիւնը չունի այլևս, նա միացած է և աստիճան մը ձուլուած: Հայը իւր առանձին եկեղեցին ունի, ուրեմն պէտք է վերցնել այդ խոջընդոսը մէջտեղէն, և Ռուսիա էն աւելի իւր ուշադրութիւնը կեդրոնացուցած է ասոր վրայ: Երբ վեհ. Հայրիկը 95 թվին Բեդերպուրի կը գտնուէր, Մէքրապօլիան իրեն կառաջարկէր եկեղեցւոյ միութեան հարցը իսկ ներքին գործոց նախարարը կը ցանկար որ Մայր Աթոռը Եջմիածնէն Բեդերպուրի փոխադրուէր: Հայրիկ առաջին հարցին կը պատասխանէր՝ Քրիստոնէական եկեղեցիներու առանձին առանձին ըլլալը ծաղկեփունջի մը օրինակով բացատրելով, իսկ Բեդերպուրի փոխադրուելու ցանկութիւնը կը մերժէր բացատրելով Եջմիածնի աւանդական սրբութիւնը և Մայր Աթոռի փոփոխութեան անկարելիութիւնը:

Սակայն Ռուսիա իւր նպատակին հասնելու համար, միջոցներ գտած է. անմիջական գործ մը կրնայ յուզում առաջացնել, կամ այլ հետեւանքներ ունենալ: Եկեղեցիէն աւելի

տալ իբր սերմնացուի գին, կառավարութիւնն ևս կաշխատի այդչափ գումար մը տալ: Երկուքը միասին հազիւ պիտի կրնան մատակարարել մէկ հինգերորդ սերմնացուն, ինչ որ այս մարդիկը կտարածէն առաջ՝ իբր գարնանացան միայն կը սերմանէին: Այսպէսով կը տեսնէք թէ՛ մենք այս մարդիկը չենք հարստացներ, այլ կը յուսանք Տիրոջ օգնութեամբ մը այս տարուան հունիսով գէթ գալ տարուան սովին արգելք ըլլալ:»

Տօք. Բէյնօլտս իր մէկ ուրիշ նամակով կը գրէ. — «Տեղեկութիւն ստացայ թէ վանայ լծի եղբրքը զըտնուող գլուղի մը մէջ քանակաւ հոգի արդէն մեռած են, անոնց մէջ ոմանք ինքզինքն լիճը նետելով և ուրիշները ինքզինքն ինչ կ'ախելով: Եթէ կարողանայի վստահ ըլլալ թէ ապագային ինձ բան մը պիտի գար՝ անոնց նպատակը զրկէի և կարելի էր իրենք զիր ընել: Թէ կրնայինք սերմնացուի համար պահածներէս մաս մը անոնց ուտելու համար տալ, թէպէտ և սերմնացուի պէտքը աւելի ստիպողական է և յաջորդ տարուան պաշարը անկէ կ'ախուժ ունի:»

ՁԵՑԹՈՒՆ

Ձէյթունի մէջ իրաց կացութիւնը միևնոյնն է: Ամերիկեան միտիոնար պատ. Մազալիւս կը գրէ: «Ձէյթունի փողոցները շրջախններէն եկած անօթիներով լեցուած են. ասոնց անօթութիւնը յայտնի կերպով կարելի է տեսնել իրենց դէմքերուն վրայ: Հաշուած ենք, և ասիկա շափազանցութիւն մը չէ, թէ Ձէյթունի բընակիչներէն 1000 հոգի և շրջակայ գիւղացիներէն 2500 հոգի հացի կարօտ են: Ասկէ ամիս մը վերջ այս թիւը պէտք է կրկնապատկել, իսկ երկու ամիս վերջ կացութիւնը սուկալի կը դառնայ: Մենք այժմէն կը զարհուրինք մտածել թէ ի՞նչ պիտի ըլլայ իրենց վիճակը այն ատեն:»

ՄԷՐՏԻՆ

Մէրտինէն եկած տեղեկութիւններն ալ շատ գէշ են: Տօք. Անտրիւ կը գրէ. — «Եթէ կարողանանք անգամ մը այս ժողովուրդը մինչև գարուն պահել, անոնք կարող պիտի ըլլան ալ իրենց զրկեցը հոգալու: Իրաց այս վիճակը աւելի պիտի վատթարանայ: Եկեղեցւոյ պետի վարկը կտարեն և անոր ազդեցութիւնն ու ժողովրդը պահանջութիւնը նուազեցնելն ընտրած է իւր ուղին: Նախ Հայրիկի ժողովրդապահութեան դէմ՝ մաքառեց մեր իսկ ձեռքով, ապա Հայրիկ կաթողիկոսի իրաւունքներն իւր կը ջնայ այսօր: Եջմիածնի մէջ ուսուկան կամայականութիւնները ծայրայեղութեան հասած են: Կէս գիշերին, առանց վեհափառի գիտութեան՝ Գէորգեան ձեմարան խզազարկել, աշակերտներին հարցաքննութեան ենթարկել, աշակերտ մը բանտարկել, հապա ի՞նչ ըսել այն ունիւթեան, որ Ռուս պաշտօնեաներ վեհարանը կը խուզարկեն, երբ վեհ. Հայրիկ բացակայ կը գտնուի անկէ (Բերսիական ամբարանոց գնացած ըլլալուն համար) և կաթողիկոսի շաթըր (ծառան) որպէս յեղափոխական թիֆլիզի բանտ կը տարուի: Բարբարոսութիւն չանուանե՞լ և այն բան, որ կաթողիկոսին նամակներն անգամ վաղարշապատի փոստը կը յանգչի բանալ: Այս ամեն անոր համար է որ ցոյց տայ թէ կաթողիկոս ԲԱՆ ՄԸ ՁԵ», և մեզմէ անմիտներ կը կրկնեն այդ՝ առանց մտածելու որ իրենք Ռուսական թեմապետութիւն մ'է որ կ'ընեն կապիորէն:

Այսօր ալ մինչև անգամ զուտ

նայ, մինչև որ գարնան ունեղեցիններ ու բանջարեղէններ բողբոջին, որպէս զի աղքատները կրնան ժողովել, սակայն խողկաղնիք և դեղին կորեակի խիտ սակաւութեան պատճառաւ կրնան անօթութեան զոհ երթալ մեծ քանակներով:»

ՀԱՃԸՆ

Հաճընի մէջ ևս նպատակ գործը այն աստիճան նուազած է եղեր, որ նպատակաւոր ընկերութեան անդամները սոսկումի մէջ են եղեր թէ ինչպէս կարելի է որբանոցները գոցել, սակայն վերջերս նպատակներ հասնելով՝ իրենց գործը շարունակել կ'սած են:

ԲԱՂԷՇ

Լօնտօնի «Ֆրէնչ» թերթը իր վերջին թիւերէն մէկուն հետ հրատարակած է յաւելում մը, որ Պիթ-Լի գէն ինչպատ սովատանը հայերու սրտաշարժ դիմում մըն է: Իրական սովալուրթեան անաջացած և սուկալի չքաւորութեան հետեւանքով մահուան յուսահատական դէպքեր են պատահած: Պէտքի անհրաժեշտութիւնը այն աստիճանի հասած է, որ մասնաւորապէս խնդրած են որ և է դրամական նպատակ հաւաքով զրկուի և այսպիսով ապահովուին շատ մը կեանքեր, որոնք նամակներու մինչև հասնելը կրնան մեռնիլ:

ՍԵՐԱՍՏԻՍ

Սերաստիոյ ազգային որբանոցին մէջ 170 որբեր կը պատրաստուին, որոնց ծախքը բացի բարերարներու կողմէ յատկացուած 20 ոսկիէն, տեղային միջոցներով կը հոգացուին:

ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլսէն «Թայմզ»-ին կը գրեն. «Հայերը Սսի կաթողիկոս մը ընտրելու համար շատ մը դժուարութիւններու ենթարկուած են: Այդ պատճառով 20 ամիսէ ի վեր դատարկ է: Սուլթանը կը փափաքէ ընտրուական ձեռն մէջ փոփոխութիւններ մտցնել սակայն Օրմանեան պատրիարք և ամբողջ կրօնական ժողովը ասոր կը հակառակին: Ոստն ժողովը կը փափաքէր լուր կերպով համակերպել, սակայն չը կրնայով մեծամասնութիւն կողմէ՛ երկի ամբողջութեամբ հրաժարեցաւ: Պատրիարքարանն ուրեմն հիմա առանց ժողո-

կրօնական խնդիրներուն միջամտել սկսած են: Պրոկուրորը խնդիր ներկայացուցած է կառավարութեան, — ի հարկէ կանխօրէն թելադրուած — որ այսուհետեւ կաթողիկոս իրաւունք չունենայ անկախօրէն վճռելու ամուսնական խնդիրները, այլ Սինդիքին խորհրդակցութեամբ, որպէս զի ինքն ալ գիտակից ըլլայ: Ամեն օր նոր բռնաբարութեամբ մեր եկեղեցական իրաւունքները: Ոն՞գճ Մակար կաթողիկոս, իր ուսուսիրութեամբ հանգիստ, վերջին ուսակարն ճնշումներն չկրցաւ դիմանալ և երբ էջմիածնի վանքապատկան կայրածներու Ռուսին յանձնելու մերժման գիրք թղթատարին կը զրկէր, երկուդէն թուեալից բաժակի իր շրթունքներուն մօտեցնելով վերջ կուտար իւր կեանքին:

Երկար կըլար մի անգամէն գրել ուսուսական այն ամեն բռնաբարութիւնները, որոնք գործադրուած են թէ տեղեկագրէն առաջ և թէ յետոյ, Դպրոցական ծանօթ դժբախտ խնդրին հետ սերտ անջութիւն ունի էջմիածնի Գէորգեան ձեմարանի հարցը: Ընդ 95 թ-ին վերջեր ծխական դպրոցներ յանձնման հրահանգին հետ ներկայացուեցաւ վեհ. Հայրիկին ծրագիր մը ձեմարանի նկատմամբ, որով կ'առաջարկուէր ձեմարանի տե-

վի է և անզօր է ու է մէկը ընտրելու իբր կաթողիկոս:»
Ուրիշ հեռագիր մըն ալ կը ծանուցանէ թէ Սոսն ժողովը իր հրաժարականը ետ առած է, մինչև նոր ժողովի մը ընտրութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՂԻՐ

Լօնտօն հրատարակուող «Լոնտօն-տար» թերթի մարտ 16 թվականի մէջ իր Կ. Պօլսի թղթակցէն բաւական շահեկան յօդուած մը կայ, որուն համառօտութիւնը «Միջնէրի շէրլըս» իր ապրիլի թվականի մէջ կը զնէ: «Ճշմարիտ է թէ կոտորածի ժամանակ ծերերը, պատանները և մանուկները մեծ մասամբ խնայուեցան և միայն երիտասարդները և զօրեղները սպաննուեցան, այսպիսով ընտանիքները իրենց հաց վասակողէն զըրկուեցան: Սակայն մարդու կորուստը չարմանելի է և ազգ մը պատերազմէ մը կամ համաճարակէ մը շիջելու իր, որոնք կոտորածի մը շափ գոհեր կ'ունեն: Պարբերաբար կատարուած թալանները երկայ թշուառութեանց սկզբնաւորութիւններն էին: Մինչև իսկ երբ էրկիները կամ եղբայրները կը սպաննուէին, ընտանիքները տակաւին իրենց գոհարեղէնները, իրենց կազ կարասին, իրենց արջառը և գոյքը ունէին. երբ այս բաներըն ալ ծախուեցան կամ կողոպտուեցան, ալ ուրիշ ապրուստի միջոցներ չկային:»

Յօդուածը կը վերջանայ Հայաստանի վրայ կառավարութեան մը հովանաւորութեան առաջարկութիւնով. և կը պնդէ թէ ուրիշ կերպով այս մարտիրոս ազգը ջնջումէ չէ կարելի ազատել:

«Միջնէրի շէրլըս» կը յաւելու.

«Սա թէ և սակայն առաջարկութիւն մըն է, սակայն այդպիսի փոփոխութիւն արդէն կան, իբր թէ Եւրոպական պետութիւն մը իր հովանաւորութեան տակ պիտի առնէ անխաղախ և անկեղծ կայ նահանգ մը, և ջախջախուած Հայ ժողովրդեան միջոց պիտի ընծայէ հին խաղաղ ու ապահով ապրելու: Այսպիսի հովանաւորութեան մը ենթարկուող որեւէ նահանգ անմիջապէս ամբողջ Հայ ազգի ապաստանարանը պիտի դառնայ, ուր շուտով կրնայ վերակենդանանալ, եթէ անգամ մը իրեն առիթ ընծայուի, որ ներկայիս չունի:

սուչ ընտրել Ռուսաց համալսարան աւարտած բարձր հոգեւորական մը՝ Լուսաւորութեան նախարարի վաւերացումներ, արտասահման աւարտած ուսուցիչներ շընդունիլ, դասերի պաշտօնական լեզուն ուսերէնի վերածել, Հայոց պատմութեան դաս միայն լսարանական բաժնի մէջ աւանդել են. ևս: Այս խնդիրը առայժմ կը մնայ և դպրոցական վերջին կարգադրութեան կայսերական հրովարտակին մէջ ըսուած էր «Ճեմարան առ այժմ ներկայ ուղղութեամբ պիտի շարունակէ, մինչև կայսերական նոր կարգադրութիւնը:»

Եկեղեցի ու դպրոցէն յետոյ, հայերի յառաջդիմութիւն ուսերի աջք կը ծակէ: Հայեր սեփականութեան իրաւունքով՝ քաղաքային ժողովի անդամներ կ'ընտրուին, քաղաքագըլուխ կ'ըլլան, այդ անտանելի է ուսուց համար: Ասոր համար է որ այսօր թիֆլիզի քաղաքագըլուխ և երկու հայագէտի անդամներ դասեր ենթարկուած են: Միւսիսիսիսներ հոն աւագակութիւն կրնեն՝ Հայերն են մեղաւոր, որովհետեւ վաճառականութեամբ կը կողոպտեն նոյն միւս ժողովուրդները, անոնք ալ անօթութենէ աւագակութեան կը դիմեն(?!):

Ի՞նչ երկարացնեմ, Սովորին և վէլչիզի քարոզները կարգաչէք:

ընկով թէ՛ ինք իւր ծովային նոր ուժերու յաւելման համար եղած վերջին քուէարկութիւն գործարարելէ կը հրաժարի՝ եթէ նոյն բանը Ռուսիա ընէ. և Ռուսիա ձայն մը չհանց:

Այն միակ արդիւնքը որ խաղաղութեան ժողովը կրնար ունենալ ներգործելով հասարակաց կարծիքին վրայ, ջարդ այդ ալ խափաներ է՝ խօսք առնելով բոլոր պետութիւններէն որ ժողովին խօսքերը գաղանի պահուին ու հրատարակութեան տըրուին միայն ձեւական բաները: Նիւ Եորք թայմզի Լոնտոնի թղթակիցը կը հեռագրէ թէ՛ Ռուսիայի ինքն ինքն հեռագրուած հեռագիր մը իմացուցեր է թէ՛ Լեհերուն կողմանէ պատգամաւորութիւն մը ներկայացրէ նախապէս Մաք քիւնլիին, որը խոստացրէ հրաժանել իր ներկայացուցիչները որ Լեհաստանի խնդիրը յարուցանեն խաղաղութեան ժողովին մէջ. ասոր վրայ թղթակիցը կը յաւելու «Այդ պարագային ինչո՞ւ Ալզաս Լորէնի, Հայկական եւ Եգիպտական խնդիրներն ալ չյարուցուին»: և եթէ ժողովը թողու որ այս պատերազմի հեղեղներուն դռները բացուին, բանակները պէտք է համախմբուին՝ խաղաղութեան ժողովի ներկայացուցիչները իրենց տեղերը չվերադարձան:

Պաղատան ժողովին մէջ քուէարկուցներու թիւը 120ի շարք կը հաշուուի:

Պայիւն ներկայացուցիչը ժողովին ներկայանալէ մերժուած ըլլալով՝ Լահէէն մեկնած է:

Ա.Ձ.Դ

Յառաջիկայ կիրակի (Մայիս 2) ժամ 11ին Հայկազեան կաճառն գլխաւորութեան պիտի երթայ ի «Պարբիս Բրիք Զօթէլ» (ձէրգի): Հետեւեալ ճամբաներէ կարելի է հասնիլ: Ա՛ն Պարբիս կամ Բրիք Զօթէլը փողոցի Ֆէրիլն եւ անցնելով ձէրգի՝ ա՛ն «Բէօթըլ Փօրթըլ քար»:

ՀԱՅ-ՍՄԵՐԻԿԱ-ԲԱՂԱԲԱՍՏԻՆՆԵՐ

Հայ քաղաքացիներու Տիւօքրաթիք կազմակերպութեան մը նախաձեռնութիւնը եղած է քանի մը անձանց կողմանէ: Վերջնական կարգադրութեանց համար յառաջիկայ շաբաթ երեկոյ ժողով մը պիտի ըլլայ 19 ուէյթ 27րդ փողոց էլքս Զօլին մէջ ժամ 8ին:

Ամէն անոնք որ քաղաքացի են կամ կրնան մտտերս ըլլալ ու նաև կը փափաքեն Տիւօքրաթիք կազմակերպութեան մը միանալու՝ հրաւիրուած են:

Ի դիմաց նախաձեռնող մարմնոյն

ԿԱՐԵՒՈՐ Ա.Ձ.Դ

Վասպուրականի մեր սովատանջ եղբարց ի նպաստ ամսոյս 27ին տըրուելիք թատերական ներկայացման սոսմերը վաճառող բարեկամներէն կը խնդրուի որ իրենց հաշիւները փութացնեն, որովհետեւ մինչև մայիս 26 եւ չը տրուած սոսմերն վաճառուած պիտի նկատուին և փոխարէնը պիտի պահանջուի:

Տըթ. Յովհ. Արշակունի

ԾԱՍՈՒ ԳՐԻՆԵՐ

Լրագրոյ խմբագրութիւնն Վենետիկի Միսիթարեանց Տպարանին հետ մասնաւոր կարգադրութիւն մը ըրած է՝ նոյն տպարանէն ի լոյս ընծայուած գրքերէն Ամերիկայի Հայոց վաճառելու համար: Ո՛ր և է գիրք ստանալ փափաքողները կրնան դիմել մեզ անձամբ կամ նամակաւ:

ՀԱՆԴԵՍ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՄ Ի ՓԱԹԸ ԲՍՈՒՆ

Մայիս 27 Շաբաթ երկրոյ ժամ 7,30 ին ինսթիւթիւտ Զօլի մէջ 88-90 Մարքէթ փողոց: Պիտի ներկայացուի Պ. Չարգաւաթճեանի ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԵՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ կատակախառն թատերգութիւն:

Ներկայացման հասոյթը ինպաստ ֆաթրընի Գաղթականական Միութեան է:

Մուտքը 50 և 25 Սէնթ է:

Մեր ներկայացման նպատակն է բարոյական ու մտաւորական շարժում յառաջ բերել երիտասարդութեան մէջ:

Կարգադրիչ. — Կ.Մ. Չանգալեան

ՍՕՅԼԵԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՊՆՃԱՊՈՐԾ

441 Ուէյթ 26րդ փողոց, Նիւ Եորք Ուէյթ 26րդ փողոց, Նիւ Եորք Այս գործարանին մէջ կը շինենք գեղեցիկ պնճեղէն անօթներ, սեղանատան, խոհանոցի եւ տան մէջ գործածելի ամեն տեսակ կարասիները նաև հիները կը նորոգենք եւ կը լայնեցնեն (խայտ): Թիւրքիայէն և Պարսկաստանէն բերուած հնութիւններու իրական նմանութիւնը կը շինենք: Տրուած ապսպրանքները կը ատարենք ամենայն ճշգրտութեամբ Մեր գները խիստ չափաւոր են:

ՄԻՀՐԱՆ ԽԱՐՔՈՒԹԼԵԱՆ M. Harpootian, P. O. Box 470, Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը՝ իր ձեռամբ դրամ շրջողներէն գնահատելի կերպով քաշալերնալ՝ պարտք կը սեպէ յայտարարել թէ մենք ևս պէտք եղած գոհողութիւնը շինք զլացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'պացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը: Հայ ժողովըրդեան և մասնաւորապէս մեր տան անձանօթներուն իրական վստահութիւն տալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐՔՈՒԹԻՆ ԵՒ ՆԵՂԱՐՔ ԽԱՐՔՈՒԹԼԵԱՆ տան՝ երկրին մէջ ունեցած առաւել քան 10,000 օսմ. ոսկոյ անձ շարժ ստացուածքը իր սոյն փոխանակարի գործոյն երաշխաւորութիւնըն է, յայտ անոնց որոնք կուզեն գրամինի վաճառելի միջոցով շրջել: Ուստի կը յուսանք թէ հայ հասարակութիւնը չ'պիտի վարանի իրրև ապահովագոյն միջոցը՝ մեր ձեռամբ շրջել իւր դրամը, որ կրնանք փոխանակարի տալ Սարգիսի, Տիգրանակերտի, Բիլի, Բալուի, Բերրիի, Մալթիի, Սեպի, Կ. Պօլի, նաև Տաճ. բոլոր քաղաքաց համար: (Ինձ դրամ շրջողներն ապահովութեան համար՝ նէշընը Պանքի չէք և կամ մընի օրտըր շրջելու են):

Հայրենիքի մէջ ո՛ր և է գործ տեսնելու կամ գործարման օգնելու համար՝ պատրաստ եմ եղբօրս Յարութիւնէ Կ. թ ձեռամբ կատարել տալ:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցեւորման, համակազուլու, հրաւիրագիր, շրջաբերականներ, տետրակներ ևն: Մեր գները գոհացուցիչ են. տըպագրութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

ՆՈՐ ԿԵԱՆԲ

ՀԱՆԴԵՍ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱՍՆ

Տարեկան բաժանորդագրին է 2 տոլար. վեցամսեայ՝ 1 տոլար:

Նոր կեանքի Նիւ Եորքի գործակալն է Պրն. Անտօն Թագաւորեան, և հասցէն՝ 343 Իսթ 34րդ փողոց:

Նոր կեանքի բաժանորդներուն Մարտը՝ ձրի կը զբոհուի:

Խմբագրութեան հասցէն է՝

L. Frank, 32 CHESTERTON ROAD LONDON W, ENGLAND

The Equitable Life Ins. Society of the U. S « Էքիւթէյլ »

Աշխարհի Հզօրագոյն և լուազոյն կենաց Ապահովագրական Ընկերութիւնը:

Ամեն հասակի և վիճակի տէր անձանց համար ապահովագրելու կը տայ, ի դէպ մահու կամ 15-20-25 տարիէն վճարելի՝ եթէ ուզուի:

Օտար երկրներէ կամ ներքին հանգներէն փափաքողք կրնան դիւրաւ թղթակցութեամբ ինքզինքնին ապահովագրել տալ:

Հրդեհի դէմ ևս կ'ապահովագրուի: (Գործակալ)

ԿԱՐԱՊԵՏ ՊԻՒՐԻՆԻՆՆԻԿ 164 E. 27th St. New York



Պէրլինի համալսարանէն վկայեալ՝ Տըթր. Էֆիլ պատրաստ է ամենազուրկ մասնաւորապէս գաղտնի կոչուած արտերը բժշկելու: Կատարելապէս չըբժշկուող հիւանդին զը դրամը ետ կը տրուի: Շատ մը հայեր մեծ գոհացում գտեր են իրմէ: Հայոց համար վճարները շատ չափաւոր են: Օֆիսը 503 5րդ Ավրելի 42րդ փողոցի անկիւնն է: Առաւօտեան ժամը 9էն իրիկուան 5-ը, իսկ կիրակիները՝ 9-12 օֆիսը կը գըտանուի: 3-12

Ս. ՏԱՄՊՈՒՐԱՅԻՆ ԵՒ ՊԱՐԱՎԱՍՏԱՌ

509 2րդ Ավրելի, 28 և 29րդ փողոց:

Եթէ սարինք իվիւր հաստատած խանութի մէջ գտած յաջողութիւնով՝ կարող եմ շատ լաւ ապրանքներ առլ շատ ատեն գնով՝ համոզուած ըլլալով թէ՛ ապահով շահին գլխաւոր միջոցն է յաճախորդը գոհ ընել: Եթէ մեր ապրանքները գոհացուցիչ չըլլան՝ վճարուած դըրամը ետ կը դարձունենք: Մեր քով կը գտնուին ամեն տեսակ բանջարեղէններ, պտուղներ ու կիրակուրի վերարեբեալ տեղական կամ Արեւելեան ամեն կարգի նիւթեր, թիթեղեայ սուսիներով կամ սուսնց սուսի: Մեր գներու մասին հետեւեալ նմոյշները կուտանք: Պուլուր փառնտը 4 սէնթ. 25 փառնտէն աւելի գնողին համար 3½ սէնթ: Ծեծած փառնտար 4 սէնթ, գէյթուն՝ 10 սէնթ, 10 փառնտէն աւելի գնողին համար 9 սէնթ: Մաքուր ալիւրի հային մէկը 3 և երկուքը 5 սէնթ: Կաթ քորթը 3 սէնթ: Հայկական գէյթունի իւր, կորկոտ, կանանչ գէյթուն, պամեայ, Ֆրեսարի, լէպլէպի, Այնթէպ հալվա-սի ևն. կը վաճառենք. մեծ քանակութեամբ գնողներուն կարեւոր գեղջ ընելով:

Նամակով յանձնարարութեան համար դիմել վերոյիշեալ հասցէին:

Ա.Ձ.Դ

Լուսանկարիչ Տիգրան Ճ. Մելքոնեան Պրուքլինէն Փաթըրաքն Ն. Ճ. փոխադրուելով՝ հոն հաստատած է այժմ սթիւտիօ լուսանկարչատունը 182 Մէյն Ըսթրիտի վրայ:

Ա.Ձ.Դ

42րդ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան կաճառը տեղափոխուած և աւելի հաստատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ավրելի 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբթի իրիկուներ ժամը 8էն 10ը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՐ ԵՒ ՊԱՐԱՎԱՍՏԱՌԱՍ ՈՒՍՈՒՆ Ա. Գըրպըլըգեանի

Թիւ 313 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Պատու ունի ծանուցանել թէ սախանութը բացուեցաւ շարժուած մէջ՝ տեղական և արեւելեան ամէն տեսակ նպարեղէններով: Ապրանայ թարմ լինելն ու գներու չափաւորութիւնը ծանուցանելու համար կը հրաւիրուին Հայերն գէթ միանալով փորձել մէկ փորձը բուսական է յաճախորդը մը՝ տեղեկական ընելու:

Մէկ գին, ատեն գին. քիչ շահ, շատ առևտուր: Սա է մեր նշանարան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՍԿՈՒԹԻՆ ՍՐԻՆԿ



ԿԱՍ ԱՉԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ Նիւ Եորք, 1899 Հասոց Ա.

Կը պարունակէ 256 երեսներ և 16 գեղեցիկ պատկերներ: Տպուած է խիստ ընտիր թղթի վրայ և փառաւոր կերպով կազմուած:

Գիներն են. թղթակազմ (առանց պատկերի) 50 Սէնթ. թղթակազմ՝ 65 սէնթ. Լաթակազմ՝ 75 սէնթ. փառակազմ՝ մէկ տոլար: Գիներն կանխիկ են: Մեծ քանակութեամբ գնողներու համար մասնաւոր գեղջ կայ: Գրել, կամ դրամ շրջել առ՝

H. Eguinian, 1168 I St, Fresno, Cal.

M. T. Fourounjian, 282 Jay St, Brooklyn, New York

Նիւ Ինկլիւտ նահանգներուն համար ընդհանուր գործակալ՝ Ն. Թաթնեան, 404 Fountain St, Providence R. I.

Մ. ԹԱՃՅԱՆ ԿԸ ՎԱՅԱՌԷ



Փառակազմը 1.00, Լաթակազմ՝ 75, Թղթակազմ՝ 65 սէնթ և թղթակազմ (առանց պատկերի) 50 սէնթ: Մեծ քանակութեամբ գնողներու համար կը գեղջուի:

Կը վաճառէ նաև Րաֆֆիի գրքերը՝ սովորական գներով: Դիմել յիշեալ հասցէին:

281 William St, New York

Ուսթրի Հայերը կրնան «Սրինգ» գնել նաև Պրն. Գրիգոր Մարգարեանէ՝ 167 Summer St.